

Որփէնոս և Մուսա, . . . առ Վնսփորացիս՝ Ախաիքար, Հնգկաց մէջ՝ Մերկիմաստակը, Պարսից մէջ՝ մագերը, առ Հոռվմայեցիս՝ հաւահարցը: Այսպիսի էր Մովսէս և իւր յաջորդները. . . Արդեօք ի՞նչպիսի է այս Ախաիքարի, Վնսփորի թաղաւորութեան ժողովրդոց, Որփէնոսին և Տրոփոնիոսին պատմական իրականութիւնը. ոչ ոք կրնայ որոշակի զրուցել:

Հուսկ, Կղեմէս Աղեքսանդրացի այսպէս կը խօսի իւր Յաճախապատում (Stromates) զրոց այն զլիւնք մէջ (Ա. գլ. ԺԵ) յորում կը պաշտպանէ յունական իմաստասիրութեան մեծաւ մասամբ բարբարոսներէն օգտուած ըլլալուն խնդիրը. «Կրսնն թէ, Դեմոկրիտէս Բարեբացաց բարուց վրայ ճառ մը զբաժ է». — Ինչպէս որ կը տեսնենք, Կղեմէս ի լրոյ կը խօսի Հոս, — «և Աքիքարու արձանագրութիւնը թարգմանելով իր գրութեան մէջ անցուցեր է»: Ասոնց վրայ կրնանք յաւելուլ չորրորդ անձնաւորութիւն մ'ալ, աւարբացի Հայկարը. M. Dillon այսպէս կը խօսի վրան. «Աւարբացի շատ հին բանաստեղծ մը կը յիշէ զՀայկար որ Ղըմայի գարնուեցաւ իւր բանակին զլուս կեցած միջոց»: Այս համառօտ ծանօթութիւնը լոյս մը չի սփռեր իմանալու՝ թէ արդեօք արաբացի Հայկարը առասպելական անձնաւորութիւն ներէն չէ, ինչպէս թուին միւս համանունը, կամ թէ իւր դժբաղդութիւնը իմաստուն թիկարի Պատմութեան զիւցագնին հետ նմանութիւն մ'ունի:

* *

Ինչ որ ալ ըլլան այս մանրամասնութիւնք, և թէ այս կամ այն դարուն եղած ըլլան կամ չըլլան մէկ կամ բազմաթիւ անձինք թիկար անուամբ, թիկարի ձախորդութիւնք՝ որոց նշանաւորներէն մին կը յիշէ Տովբիթայ գիրքը, պատմական իրականութիւն չունին, և հին վէպերէն հազիւ կը զանազանին, այն վէպերէն՝ որ հեռաւոր անցելոյն մէջ գոյութիւն առած արեւելեան վիպասաններու երեակայութեամբ, բերնէ բերան հասեր են մինչեւ մեր օրերը:

Ճիշդ որ դարուն թիկարու Պատմութեան նախկին անծանօթ խմբագրողը զրի առեր է զասոնք, ոչ ոք՝ գէթ առ ժամ, ռահմանելը յանձն պիտի տանու: Սակայն ամենէն կարելոր կէտը, ամենուն ալ ստոյգ երեւցած կէտ մը որ կայ՝ այս է, թէ թիկարի Պատմութեան գրականական կաղմութիւնը Տովբիթայ գրքին գրառելէն առաջ է: Այս առաջնութիւնը կը հասկըցուի Տովբիթայ Գրքին թիկարի ձախորդութեանց վրայ ըսածներէն. ստոյգ է որ ակնարկութիւն մը կայ անդ մեր թիկարի Պատմութեան: Սակայն ակնարկութիւն մը ինքն իրմով չի լուսաբանուիր. պայծառ է այդ անոր համար՝ որուն մտաց մէջ յիշատակ մը կը զարթոյցանէ, բայց անհասկանալի կը մնայ այլոց իր միջին համոտութեամբ:

Արդ, երբ հասկըցուեցան Տովբիթայ Գրքը կարճ ակնարկութիւնքն. — այն առեւն երբ նոյն տողերը լուսաբանելու համար թիկարի Պատմութիւնը ձեռք առնուեցաւ, և եթէ չափազանց չէ սոյն բացատրութիւնս, ինչ մ'եղաւ այն՝ որ շատ բան լուսաւորեց:

Հ. Գ. ՉԵԼԵՆԿԻՆ

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ

(Շար. տես էջ 452)

ԱՅՐԱՐԱՆ. Ասոր. ԲԻՐԱՐՏԻՒ. ԳԴ. ARAAT. ԵՐՐ. ԵՐՐ. — Հայ աշխարհի հոգեւոր և վեհադոյն նահանգն՝ Կիլիկիայ մեր միւս նահանգաց միջովայրն, և այդ պատճառաւ ճահողապէս Միլենաշխարհ կը կոչուի Բուզանդէն: Այրաբատը շրջապատող նահանգներն են, արեւելքէն՝ Սիւնիք հիւսիսէն՝ Գուգարք. արեւմուտքէն Տայք և Բարձր Հայք. հարաւէն՝ Տուրքերան և Վասպուրական: Ինչպէս որ վայել է թագաւորական վիճակի՝ ընդարձակագոյն է Այրաբատ մեր բոլոր միւս նահանգներէն. գրեթէ 160 մղոն երկայնութիւն ունի Վերին Բա-

սենու ծայրէն մինչև Գեղաքունեաց լեռները, և 120 լայնութիւն, Աղաքէն մինչև նահանգիս Ծաղկոտն՝ և Վասպուրականի Աղիոյիտ գաւառները բաժնող լեռնագոտին: Ընդարձակութիւնն համեմատ բաժնուած է նաև շատ մասերու, քսան գաւառներու, և այս տակէն Արշակունեաց հարստութեան վերջն, նալէն յետոյ. վասն զի ասոնց ժամանակ զանազան գաւառներ իրարու հետ միացած կաղմէին միայն՝ մեծ գաւառ մը, որ էր արքունի նահանգն Այրարատայ. անոր համար խորենացոյ աշխարհագրութեան օրինակաց ոմանց մէջ տասնեկից գաւառ կը յիշուին Այրարատայ, միւս չորս կամ հինգ գաւառները ի միասին համարելով սեփական Արարատեան երկիր, որ կը բնակէին հին Հայկազունք Արմենական սկսեալ, որ և վերջը Արշակունի թագաւորաց Ռատան եղաւ: Այս նահանգը կամ բուն Այրարատեան երկիր ըսուածը՝ կը տարածուի Հայոց բարձրագոյն լեռանց, Մասնաց և Արագածու մէջտեղ, Հր.էն դէպ ի Հս. և Երրակայ սահմաններէն կամ Ախուրեան գետէն՝ մինչև Գեղաքունեաց լեռները:

Երկու զուտ Հայկական գետահովտաց վիճակ է Այրարատ, Երասխայ և Արածանայ, յորոց առաջինն ընդարձակագոյն է. վասն զի Երասխ իւր աղբերակունքներէն, այսինքն Բասենու արևմուտքէն՝ զրեթէ ուղղակի վազելով դէպի արևելք՝ աշխարհին բովանդակ երկայնութիւնը կը կարէ, մինչև մեծ դաշտը՝ որ կ'ինկնայ Եաբուրայ և Նախճաւանու մէջտեղ: Երկրին մեծագոյն մասը Երասխայ ձախակողմէն է, այսինքն Հիւսիսային կողմը, և այս մասին մէջ են բոլոր արքունական քաղաքներն և ուսումները: Իսկ Արածանի փոքր մաս մը ունի Այրարատայ մէջ, և են գեղեցիկ գաւառն Երազկոտան և Բագրևանգայ. վերջինս շատ ընդարձակ է և կը թուի թէ ի սկզբան առաջնոյն հետ միացած՝ առանձին տուժի մը կամ նահապետութեան վիճակուած ըլլայ և ապա յարքունիս գրաւուած:

Լեռներ. — Այրարատայ վերոյիշեալ գետահովտները կ'անջրպետեն Աղրի կոչուած լեռներն, որք Մասխէն սկսեալ կ'երկնանա արևմուտս մինչև Սոսկաեա, և անկից ալ

ոչ այնչափ որոշ գոտիներով՝ մինչև լայնա, նիստ Սրամնց (Պիկեկոյ) լեռը, Տուրուբե, րանի և Բարձր Հայոց մէջտեղ. որով զրեթէ Երասխայ ամբողջ երկայնութեամբ ալ կողմը, կը տարածուի երկայնաշար լեռնագոտի մը: Նահանգիս արևելեան հարաւային կողմը բարձրացած հոյակաւոր Մեծ և փոքր Մասնաց վրայ երկարօրէն կը խօսուի ի կարգին. ասոնց արևմտակողմէն կը բարձրանան Փամպուգ կամ Խալկետոս, Զիկեկի, Սըլանի (Միկնոտ), Արարե 9650', Սիկեկ 9058', Մեծ Եիշքեփ կամ Զօր 12000', Քօշպաշ, Փիթիլի 10650', որ զրեթէ տարւոյն մեծ մասը ձինապատ է, Քեօր-օղու 8320', բուն Աղրի-տաղ 9054', Պօգ-տաղ, Սոսկաեա (Քեօսե-տաղ) 11276'. Այրարատայ արևմտեան մասին մէջ կը ձևացնեն ուրիշ հարաւագոյն լեռանց պար մը՝ Եեփան իրեն ոստերովը, Թօփ-տաղ, և ուրիշներ մինչև Կարնոյ արևելակողման լեռները, որ ըստ նախնեաց կոչուած կը թուին Մեղեդոսի: Յիշենք նաև Բառնու և Վանանգայ Սոլան լեռները, և առանձնակ կատարքն Բասենու Ագրակ, Ագ-մեղրե, Զաւար 9222', Ս. Խալ 9562' ՄԺնկերտի մետ, և այլն: Վանանգայ մէջ չկան բարձրաբերձ լեռներ այլ մի քանի անշատ լեռնակներ, իսկ Երրակայ սահմանակից կան նաև չափաւոր բարձրութիւններ, ինչպէս Եաղըձա 9752', Քոդոք 9145', Հաձի Խալի 9130', և այլն: Երազկոտն գաւառի մէջ են Նպատ և Երազկոտ լեռները. ուրիշ անշատ լեռներ կան նաև միւս գաւառաց մէջ. — Բուն Այրարատեան նահանգի մէջ յետ Մասնաց՝ գլխաւոր և առաջի լեռն է լայնագաղթ և լայնամտորոտ Արագած 12606', և նոյն դաշտի մէջ Արայի լեռ (Գառնը-Եարդը), Եամիրամայ լեռ (Հատիս) և Քեօքան տաղ. Զաւակի, որ Հիւսիսային կողմէն Արագածը կը միացնէ Գուգարաց Բամբակի լեռանց շղթայի հետ: Արագածու արևելակողմը մինչև Միւնեաց լեռները, մի քանի առանձնակ լեռները զատ՝ բոլոր երկիրը դաշտային է, և այդ պատճառաւ ընդհանրապէս Արարատեան դաշտ կը կոչուի: Կարելի է նոյն իսկ ամբողջ Այրարատ աշխարհը դաշտային կոչել, ինչպէս ի հոռմն

ևս կը կոչուէր Երասխեանց դաշտ. մասն զի Ալլրի լեռանց շղթաներէն զատ՝ որոնք լայնաւ նիստ աչ չեն, չկան ուրիշ լեռանց մեծ շղթաներ, այլ եղածները կամ առանձնակը են կամ շեղջաձեւ:

Գեծեր. — Ալլարատայ գլխաւոր և սեւ փական գետն է Երասխ, որոյ օժանդակներն են Մոշրց, Ալլաւ—սոռ, Արտոտը—լայ, Խաւնի—լայ, Սարիգամը—սոռ, և ուրիշ բազմաթիւ վտակներ, մինչև Ախտրեան գետը՝ որ իւր ամէն օժանդակներէն Հօրազգոյն է: Նահանգիս մէջ Երասխայ միւս օժանդակներն են Մեծամօր (Քարա—սոռ), Քասաղ, Հրազդան, և այլ ուրիշ ոչ սակաւ գետակներ, զորս մի առ մի յիշելն աւելորդ կը համարիմ, քանի որ իրենց կարգին իւրաքանչիւրին մանրամասն նկարագրին կը տրուի: Ծաղկոտն և Բագրեանդ գաւառաց մէջէն անցնելով կը վազէ գէպ ի Տուրուբէրան Արեւելեան Եփրատ (Մոշրատ լայ) կամ Արածանի գետն, որոյ օժանդակը են Շէօխան, Տառապպի, և ուրիշ շատ վտակներ:

Գետերէ զատ ունի Ալլարատ նաև լճակներ, որոց մեծագոյնը կ'իյնայ Կոշալիս գաւառի մէջ. ի հնունք կը կոչուէր Ծովակ Գալլառաշ, և այժմ Պալլաղիօշ (Չկնալիօ) առաւ ձուկ ունենալուն համար: Կան նաև մօրուս կամ ճախճախուտ տեղեր Բասենու դաշտին մէջ. ինչպէս նաև երկրին արևելեան մասին մէջ, Երասխայ աջ եզերքը:

ԲՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻՆ. — ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ. — Ընդհանրապէս երկրին կազմութիւնը մասնաւորապէս արևելեան մասին՝ Հրազդանգետով կամ պոլուտոտիական է, որուն ակներեւ վկայք են մեր աշխարհի երեք բարձրագոյն լեռները, Մեծ և փոքր Մասիք և Արածան և անոնց մերձակայ Կոշալիս, Արագածոտն գաւառներ, և սահմանակից Գեղամայ լեռները, որոնք երբեմն երկրիս ահեղագոյն Հրաբուխներէն էին, և իրենց վառարանաց շիջմանէն վերջ ևս, անդադար ներքին ներգործութիւններէ և շարժերէ հնազանդ չեն թողուցած երկրի, և երբեմն ևս կողից պատումամբք և ժայթմամբ տղմոյ և սկոյ, և մեծամեծ քաւանց թաւալմամբ, յառաջ բերած են աղետալի փլատներ:

Ալլարատ նահանգի զիրք բարձր բլուրով 2500 ոտքէն մինչև 6000', և լեռանց նուազութեամբ անպատուար լինելով՝ օղբ ցրէ տային է: Նուազ են նաև անտառներ. այդ պատճառաւ չորսորդ դարու կիսուն Խոսրով Բ անտառ տնկել տուաւ Դոնայ և Գառնոյ մէջտեղ. ինչպէս նաև ի հնունք Երուանդ տնկել տուած է իրեն զաստակերտաց մօտ Ախուրեանի և Երասխայ խոռոչոց սահմանը. թողունք Արմաւրայ հին սօսիներն, որք կը համարուին տնկուած Հայկայ Արմենակ որդիէն: Բնիկ Ալլարատայ մէջ կենդանի անտառ ոչ մի տեղ չկայ, բաց ի երկու Մասիսներու մէջ եղած թխտենեաց անտառն: Իսկ արևմտեան մասին մէջ են հանրածաւնօթ մայրիքն Մեծբաց (Սողանու լեռանց), Բասենու և վանանդայ մէջ. որոնք յայտնի է թէ ի հնունք անկի ընդարձակագոյն էին, որ այնչափ դարերէն ի վեր կարելով տակաւն մնացած են: ԺԳ դարուն Հուլաու գանն հոս գրկեց զՍմբատ Օրպելեան, «վասն անպար մայրաքաղաքից, զի շինէին զմեծ արքունիքն որ ի Դաւն դաշտի», Ստ. Օրպել. ԿԶ. Թուրքմուրդ որ 1704 տարւոյ օգոստոս 26ին անցած է անտառնէ՝ Ղարաէ կարին գացած ժամանակ, կը յիշէ նոճիներուն և կաւ դամախեաց զանազան տեսակներ:

Հոչակաւոր է Ալլարատ պտղաւէտութեամբ և հարստութեամբ, ինչպէս նաև տեսարանաց գեղեցկութեամբ. մեր պատմիչներն առաջիններէն սկսեալ մինչև վերջինները լիաբերան զովեստներ կու տան: Ամենէն աւելի Երբ դարու պատմիչներէն մին՝ Ղ. Փարպեցին՝ (20—28) շատ գեղեցիկ կերպով նկարագրած է աշխարհիս բուսաբերութիւնն և կենդանիներն:

Արշակ Գ Թագաւորին համար կ'ըսէ. թէ «... լքեալ մերժեալ թողոյր զբարի և զբնիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց՝ զգաւառն Ալլարատու, զճաշակապն և զճաշակաւորն և զակնեաւորն, զամենաբոյսն, զամենաբառն, զամենային, զամենագիտուն ի շահս և ի դարմանս մարդկային պիտոյիցս կենաց և վայելչութեան և սթափութեան»: Կը թողուր Արշակ Ալլարատայ ընդարձակ որսայից դաշտները, գեղեցկանիստ և պարարտորտ լեռ-

ները՝ լի որսի կենդանիներով, որոց կա-
տարներէն իշած ջրերը՝ դաշտերը ոռոգելով՝
հացի և գինւոյ առատութիւն կու տան, բու-
սոց և բանջարաց քաղցը համ և իւլա-
բուլի ընդեղէններուն անուշաւթիւն։ Դերանց
լանջերու վրայ կամ սարահարթ վայրերը
երբ մարդ աշերն գարձուէ, կը տեսնուին
բազմաբանջ ծաղկունք գոյնզգոյն հանդերձի
նման սփռուած։ Պարարտարօտ, պարար-
տահամ և թանձրախտ անած խոտերն կը
կերակրեն անթիւ արօտակահներ՝ թէ՛ ըն-
տանի էշեր և թէ վայրի էրէններու անհամար
երամներ, որոնք իրենց բոլոր մարմնով կ'ե-
րկին գէր, թանձրաթաղանթ և առողջաւակ-
իսկ անուշահոտ ծաղկանց հողը, քաջ որ-
սասէր մարդոց և բացօթեայ հօտարածնե-
րուն առողջութիւն կու տայ, և կը վերանու-
րողէ և կը կազդուէ անոնց միտքը ու գոյա-
րանքը։ Սլորարտայայ մէջ կան նաև գանա-
զան բոյսերու արմատներ, յորոց օգտակար
գեղեր կը շինեն։ Ունի նաև ոսկի, պղինձ,
երկաթ և պատուական քարեր, որոնք կար-
միր ըսուած ճճին՝ որ կը ծնանի բոյսերու
տերևներու վրայ, սակից աշնու ծիրանեղջյն
կարմիր ներկ կ'ըլլայ։ Գետերն կը մատա-
կարարեն գանազան տեսակ մեծ և փոքր
համեղաճաշակ ձկներ։ Սլորարտ և կը սնու-
ցանէ իւր մէջ նաև գանազան հաւեր։ Կրկչա-
ձայն, առապարասէր, վիմասոյզ, սորաճուտ
կաքառաց և Սալարբաց երամներ. կամ ե-
ղեգնաբնակ, թփամուտ, մացառաղօղ, պա-
րարտամարմին և անուշահամ վայրի Աքա-
րաց տեսակներ. ինչպէս նաև չրասուզակ,
մամախնդր և մեծամարմին փոք (կարպ),
Թանձր (Otis?) և Սագ. թողունք միւս ան-
համար ցամաքային և ջրային թռչնոց տեսակ-
ներն։ Նոյն Ղ. փարպեցւոյ նկարագրածի
համեմատ, նախարարները որսի ելլելով,
ամանք այծեամիներ և վայրի էշերու ետեւ-
ներէն կը վազէին, ուրիշներ ձիով կ'ինկնային
եղջերուի և եղնիկի երամներու ետեւն. մէկ
բանին ալ սրով կը սպաննէին սաստկանդամ
վարազները։ Իսկ նախարարաց փոքր որդիք՝
իրենց դաստիարակներու և ծառաներու հետ
միասին բազէներով գանազան տեսակ թռ-
չուններ կը բռնէին և կը բերէին ընթրիքնին

ճոխացնելու համար։ Այժմ եւս Այրարատը
նշանաւոր է պտուաւտութեամբ և բերքե-
րովը, որ և կը հաստատէ փարպեցւոյ նկարա-
գրութեան արժանահաւատ և բնական լինելը։
ՊՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Հին ժամանակ-
ները Այրարատ աշխարհի արեւելեան կողմը,
Արագած և Մասիս լեռանց մէջտեղ Այրա-
րատեան դաշտի վրայ, առաջին անգամ
բնակութիւն հաստատեցին որդիք և թոռունք
Հայկայ, Ըստ մեր պատմութեան, Հայկայ
անդրանիկն Արմենակ Արագածի ստորոտը
կառոյց իւր ուտանն, յետոյ իւր Արամայիս
որդին շինեց Երասխի եզերքը ամրագոյն և
ընդարձակ քաղաքն Արմաիր, որ անկէջ
վերջ գրեթէ 2000 տարի Հայոց նահապե-
տութեան իշխանանիւտ վայրն եղաւ. և ինչ-
պէս որ քաղաքն կոչուեցաւ իւր անուամբ,
նոյնպէս և իւր Շարայ որդւոյն անուամբ,
կ'ըսուի թէ կոչուեցաւ Արագածու մերձակայ
Երեւի գաւառը, և գետն ալ իւր թոռան ա-
նուամբ Երասխ։ Արամայիսի անդրանիկն Ա-
մասիա՝ Երասխ գետէն անցնելով անոր աջ
կողմը կամ դէպ ի հարաւ, բնակեցաւ Մա-
սեաց Սոքը, իւր անուամբ կոչելով մեծ լեռը,
և անոր ստորոտքը իւր երկու կրտսեր որդ-
ւոց անուամբ կառուցանելով Յուսկերտ և
Փառաւոտ քաղաքներն, դարձաւ վերստին
յԱրմաիր։ Իսկ իւր անդրանիկն Գեղամ,
Արմաիրը թողով իւր Հարամ որդւոյն,
«ինքն գնաց գմիւս լիւրամբն արեւելեան հիւ-
սիսոյ, յեզր ծովակի միոյ (Սևանայ), շինէ
գեղը ծովակին, և թողու անդ բնակիչս. և
յիւր անուն սա զլեռանն անուանէ Գեղ, և
զլեռն Գեղարունի, որով կոչի և ծովն»
(Խոր. Ա. ԺԳ)։ Հոն ծնաւ Միսակը, որուն
ժառանգութիւն առաւ Գեղարունեաց ծովիւր
մինչև Երասխայ քաղաքագլը, և այն երկիրը
կոչուեցաւ Միսական կամ Միսեիք, որ եթէ
նոյն ժամանակ անբաժան մասն կը համա-
րուէր Այրարատայ, վերջը զատուելով ե-
ղաւ Հայաստանի 15 նահանգներէն մին։
Գեղամ նորէն Այրարատ գաւառով շինեց
իրեն ձեռակերտ մը և անուանեց Գեղամի,
որ յետոյ իւր Գաւնիկ թոռան անուամբ կո-
չուեցաւ Գաւնի։

Պատմութիւնն մեզ այսչափ միայն կ'ա-

անդէ Այրարատայ մէջ Հայկազուն նահապետաց շինութեանց նկատմամբ: Հարմայ մինչև վերջը բնակեցաւ յԱրմաիր, այսպէս նաև իւր յաջորդն և պալազատը, քան և աշխարհակալն Արամ, և իւր որդին Արայ Գեղեցիկ, և ասոր որդին Սրայանն Արայ, և ապա Անուշաւան: Ասկէց կը դադրին Հայկայ ազգատոհմին որդւոց որդի ուղղակի յաջորդութիւնը, և չի գիտցուիր վերջը եկող նահապետաց և թագաւորաց ազգաւորութիւնը, և ոչ ալ երկրի մէջ եղած շինութիւնը և սահմանաց ընդարձակութիւն կամ նուազում: այլ միայն յայտնի է որ տէրութեան գահն էր յԱրմաիր, և արքունի կալուածոց յայտնի սահմանքն էին՝ արևելքէն Գեղամայ ծովէն սկսեալ մինչև արևմուտք Վանանդայ կողմերը. իսկ անկէ անդին մինչև Էփրոսոյ լեռները կամ աշխարհիս արևմտեան մասը, այսինքն վերջն անուանուած Վանանդ և Բասեանք և անոնց կից քանի մը քոքը գաւառները, որք կը թուին թէ Հին ժամանակները Բասեանք կոչուած օտար ազգի մը ժառանգութիւն եղած ըլլան, և չէ յայտնի թէ երբ նուաճուեցան Հայկազուններէն: Բայց երբ ալ նուաճուած ըլլան, յայտնի է թէ Այրարատայ արևելեան մասին պէս արքունական սեփական կալուածներ չեղան, այլ մեր նահապետաց և թագաւորաց ձեռաց տակ կամ հարկատու, ունէին իրենց առանձին նախարարներն կամ գաւառները: Յետ բարձման Հայկազանց հարստութեան, մեր երկրորդ հարստութեան Հեղինակն Վաղարշակ Արշակունին, որոյ համար կ'ըսուի թէ ի Մծրին հաստատած ըլլայ գահը, սակայն Արմաիրն ալ երեսէ չձգեց, և մանաւանդ անոր մեհմանները զարդարեց իւր նախնեաց արձաններով: Սա և իւր հորեք յաջորդները, Արշակ որդին, Արտաշէս թոռը, և Տիգրան թոռնորդին, իրենց տէրութեան սահմանները Արամէն աւելի ընդարձակեցին: Ասոնց ժամանակ կը կարծուի որ միացան աշխարհիս հետ, հարաւային արևելեան կրկին գաւառները, որ կը գտնուէին Արաքսէնդ գետահովտին մէջ, և այսպիսով Այրարատը հասաւ իւր վերջին ընդարձակութեանը: Արշակունեաց թագաւորութիւն գետ չլիբըշա-


ցած, քիչ մը ժամանակ երկիրը երկու մասի բաժնուեցաւ, և նորէն Հին նահապետական կամ Հայկազնեան Այրարատ գաւառը մտաւ իրեն անձուկ սահմանին մէջ, և եղաւ Պարսից հովանաւորութեան ներքև թագաւորական մի՞նակ մը. բայց Հայոց միւս նահապետ և գաւառաց մէջ իշխող նախարարաց ստորաձօք, երկար շտեմք և վերջ տուեցաւ Այրարատայ արքունի պալատաւորութեան, այնուհետև երկիրն ալ բաժնուեցաւ Հինդ կամ վեց առանձնակ գաւառաց, ժառանգութիւն գաւառով քանի մը ազատազգի տոհմերու. Այրարատը բաւական երկար ժամանակ մնաց Պարսից իշխանութեան ներքև և ի վերջոյ մասամբ մը և Թուրքաց. իսկ այժմ մեծաւ մասամբ Ռուսաց իշխանութեան ձեռքն է, և առ ժամ միայն Բասեն, Բագրևանդ, Մարդոսն և Կոգովիտ գաւառներն մնացեր են Թրքաց:

ԱՅՐԱՐԱՏԱՅ ԳԱՆԱՐԱՆԵՐՆ. — Ի սկզբան միայն երկու գաւառական անուններ կը յիշուին մեծ նահանգին մէջ, Արաւածոսն Արմինա, կէն, և Մասեաց ոսն Ամասիայէն. որոց վրայ աւելցաւ վերջը Շիրակ. իսկ Գեղարու, Նին, ինչպէս տեսանք, թէ և առաջ անբաժան մասն էր Այրարատայ, բայց շուտով անկէց գաւառեցաւ: Թագաւորութեան վերնալէն վերջ, վերոյիշեալ երկու լեռնոտքն եղան առանձին գաւառներ, յայտնի չէ թէ որ տոհմի ձեռաց տակ. առաջնոյն վիճակուեցաւ Հին մայրաքաղաքն Արմաիր և Վաղարշապատը. իսկ վերջը շինուած Դուինը, մերձակայ Հին Արտաշատ քաղաքովը, որք բուն Ռատան կը կոչուին Եւր գարու մէջ, Մագազունեաց տոհմին անուամբ կոչուեցան Մագազ. բայց երբեմն Գուկայ դաշտ ալ կը կոչուի այս երկիրս: Բուն Այրարատայ միջին մասն էր գաւ Կոստայք գաւառ, որ վերջին գարուց մէջ և մինչև ցարդ՝ Երևան բերդաքաղաքովը համարուեցաւ Այրարատայ բնակավայր և նոր ոստան մը, յաջորդ չորս նախնի մայրաքաղաքաց (Արմաիր, Արտաշատ, Վաղարշապատ, Դուին), թողլով Երուանդայ շինածներն, որ քիչ ժամանակ թագաւորանիստ եղան: Կոստայք գաւառի Հիւսիսային կողմը Գուկարաց սահմանակից՝ ձևացան Նիկ և

Ծրարկունիք, կամ Վարսմունիք գաւառները, և ասոնց արեւմտեան հիւսիսային կողմը Աշոցք։ Ասոնք կը համարուին Այրարատ արքունական նահանգի սեփական գաւառներն կամ վիճակներն։ Իսկ Շիրակ՝ որ ի Հայկազանց հաստատուած և արքունի սեփական յուսթին էր՝ Մեծին Տրդատայ ժամանակէն, օտար կամարականաց տոհմին ժառանգութիւն արուեցաւ, ինչպէս նաեւ Երասխանոր, որ այն տոհմի նահապետին անուամբ կոչուեցաւ Արշարունիք։ Ասոնց նման արքունի սեփականութիւն և մասն Այրարատայ կը թուի լինել և Ճակասք, որ կը գտնուի գրեթէ նահանգին կեդրոնը, և առանձին գաւառ ըլլալու ժամանակն չի գիտցուիր։ Նոյնպէս և Կողովխո՝ Մասեաց հարաւային արեւմտակողմը, սեփական էր երբեմն արքունեաց, և արուեցաւ ի ժառանգութիւն կրտսեր արքայորդոց։ — Ասոնցմէ դուրս կը մնան երկու Եփրատական գաւառներ՝ Ծրարկուն և Բազրեսանը, որ յայտնապէս օտար են բուն Այրարատեան հին նահանգէն, նոյնպէս և արեւմտեան գաւառներն, Վանանդ՝ որ երբեմն Անիսցս Բաւեան կոչուած է, և յետոյ Վունդ բուղարի մը անուամբ այսպէս։ Բաւեանը՝ շատ բնորոշակ լինելուն համար երկուքի բաժնուած, որուն հարաւակողմը՝ հաւանօրէն իւր հին մասերն՝ Արեղիսանը, Գաւեղեսանը և Հաւնունիք, որոնք Վաղարշակէն պարզ և արուեցան, քանի մը ազատաց և պաշտօնէից և համարուեցան առանձին գաւառներ։ — Այրարատայ վրայ գրուած կան բազմաթիւ հին և նոր գրուածքներ, թէ՛ աշխարհագրական և թէ պատմական տեղեկութիւններով լի, բայց ամէնէն աւելի բնորոշակն և նորն է Մեծ. Հ. Ղևոնդ Ալիշանի մեծահատոր և հմուտից տղազգրութիւնն, յորում բովանդակուած կը գտնենք ամենայն ազգային և օտար աղբիւրներ, հանդերձ մեծաղբի աշխարհագրական քարտիսիւ. տպ. Վենետիկ — Ս. Ղազար 1890, էջ 590։

2. ՍՈՒԻԲԻԱՍ ԷՓՐԻԿԵԱՆ

Շարայարեղի



ԱՍՈՐԱԿԱՆ և ՀԱՅԱԿԱՆ ՏԱՂԱՁԱՓՈԹԻՒՆ

(Շար. տնոյ յէջ 345)

ՆԱԽԵԹԱՑ ամսոյ թերթին մէջ խոստացածս՝ քանի մի Սաղմոսաց վերածնունդի հայկական չափերու՝ ահա այժմ կը կատարուի։

ՍԱԼՄՈՍ Բ.

- 3.3.3 Ընդլի խոսկեցամ հեթումոս
- 3.3.3 (Եւ) ժողովուրդ խորհեցամ լիմուտիս։
- 5.5 Յանդիման եղեմ թազաւորք երկրի,
- 3.4.4 Եւ իշխանք ժողովեցամ ի միասին
- 5.5 Վառն Տեսուն և վասն օծելոյ նորա։
- 3.3.3 Խըզեսցուք ըզկապանըս ժողոս,
- 4. (2).4 Եւ ըմկեցուք (ի մէնջ) ըզլուծ նոցա։
- 5.5 Բըմակեալմ յերկինս՝ ծիծաղեցի (զմորք,
- 5.5 Եւ Տէր ըզմոսա արհամարհեցէ։
- 1.4.4.3 Յայնմամ՝ խօսեցիք՝ մը նոսա բաւալ (կրթեալմ իւրով,
- 4.3.4.3 Եւ ուրսմտութեամբ իւրով՝ խոս (վեցուցէ ըզմոսա։
- 3.3.3 Եւ կաղի թազաւոր ի մամեւ
- 3.3 Ի վերայ Սիմի
- 4.4.4.3 Լերին սըրբոյ նորա՝ պատմել ինծ (ըզմոսմանը Տեսուն։
- 3.3.3 Տէր սոսաց ցիս ողբի իմ ես դու,
- 3.3 Եւ այսօր ծընայ զքեզ.
- 2.4.4 Խըմդեան յինմն և տայց քեզ զն (թամոս
- 5.5 Ի ժաւմոգութիւն, և իշխմութիւն
- 4.3 Դեզ զանծայմ ծագս երկրի։
- 3.3.4.3 Հովուեցես ու ըզմոսա գաւազմաւ (երկաթեաւ,
- 3.3.3 Որպէս զամօթ ըրրտի փըրդեցես ըզ (նոսա։
- 5.5 Եւ աղբ, թազաւորք, զայս ի միս (առէք,
- 4.4 Խրատեցաւորք ամենեքեան
- 5 Ոյք զատիք զերկրի։
- 4.5 Ծառայեցէք Տեսուն հրկիւղի,
- 5.5 (Եւ) Յըմեացէք առաջի՝ նորա դու (դութեամբ.
- 4.3.4.4 Ընկաւարուք ըզխըրատ նորա զի մի (բարկացի Տէր,
- 5.5.5 Եւ կորնչիցիք ի համապարհազմ (արդարութեամբ,